600.0102.04.05.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2016 թվականի №102Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագիրը կազմում է 19 895,58 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանում, անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում՝ 2 496,37 մլն դրամ.
   2) թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին տարեկան հաճախության և տևողության կրճատում՝ 301,41 մլն դրամ.
   3) նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում՝ 6 127,94 մլն դրամ.
   4) առևտրային հաշվառման համակարգի բարելավում՝ 8 649,68 մլն դրամ.
   5) մեքենա-մեխանիզմների ձեռքբերում՝ 1 309,38 մլն դրամ.

6) բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով՝ 1 010,81 մլն դրամ:

2. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին (համաձայն №№1-6 հավելվածների)՝ առաջնահերթ համարելով №№1-3 հավելվածներով նախատեսված ուղղություններով ներդրումների իրականացումը:

3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման №4 հավելվածի 5.1 կետով նախատեսված աշխատանքը առաջնեկային ծրագիր է, որի իրականացման արդյունքում նախատեսվում է նույն կետով նշված բաշխիչ ցանցում փաստացի կորուստները հավասարեցնել տեխնիկական կորուստներին՝ բացառելով առևտրային կորուստները, ինչպես նաև կրճատել նշված տարածքը սպասարկող հսկիչների թիվը.

2) սույն որոշման №4 հավելվածի 5.2-րդ կետով նախատեսված ներդրումները իրականացվում են նույն հավելվածի 5.1 կետով նախատեսված առաջնեկային ծրագրի ամբողջական իրականացումից և շահագործման հանձնումից հետո՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սպասվող արդյունքները հանձնաժողովի կողմից դրական գնահատվելու դեպքում.

3) հաշվի առնելով, որ սույն որոշման №5 հավելվածով նախատեսված ներդրումների իրականացման արդյունքում նախատեսվում է նոր սպառողների ցանցին միացման աշխատանքների գործընթացի բարելավում, ուստի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կընդունի համապատասխան որոշում, որով 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 2-րդ գլխում 0,4 կՎ՝ 30 կՎԱ-ից բարձր և 6(10) կՎ լարմամբ միացման ընդհանուր ժամկետները 2017 թվականի ապրիլի 1-ից կկրճատվեն առնվազն 15 օրով.

4) սույն որոշման №6 հավելվածով նախատեսված՝ հիմնավորված, ներդրումները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 5-րդ, 6-րդ և №2 հավելվածի 1-ին կետերով

նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումից և շահագործման հանձնումից հետո:

4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության 2017-2019 թվականների ներդրումային ծրագիրը:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №222Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
4 մայիսի 2016 թ.
ժամը 16[00]